Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «2025 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 370-Ն որոշմանը կից 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. Մասիս համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը

Մասիս համայնքի 2025 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերի փոփոխությունը պայմանավորված է հետևյալով՝

Առկա խնդիրների նկարագրությունը

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի թիվ 1169-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 2060-Ն որոշումներով համայնքների նախադպրոցական ծառայություններում երեխաների ընդգրկվածության մեծացման և մատչելիության ապահովման նպատակով պետական բյուջեից ստացվել է 18 019 509 դրամ հատկացում՝ սոցիալական որոշ խմբերի երեխաների համար, որն անհրաժեշտ է ներառել բյուջեի եկամտային և ծախսային մասերում:

2023 թվականին համայնքում մեկնարկած սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար կառավարությունը հատկացրել է կապիտալ սուբվենցիա 353 967,3 հազար դրամ, որն անհրաժեշտ է ներառել բյուջեի եկամտային մասում, իսկ ծախսային մասում ուղղել համապատասխան ծախսային ծրագրերին:

Հիմք ընդունելով Մասիս համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 22-ի «ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի բնակչության հատուկ սպասարկում և համայնքային ենթակառուցվածքների սպասարկում» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը և աշխատողների թվաքանակը հաստատելու մասին թիվ 101-Ա որոշումը, անհրաժեշտ է ՀՈԱԿ-ին տրամադրել լրացուցիչ 19 200,0 հազար դրամ ընթացիկ դրամաշնորհ:

Հիմք ընդունելով Մասիս համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 13-ի «ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը և աշխատողների թվաքանակը հաստատելու մասին թիվ 360-Ա որոշումը, անհրաժեշտ է ՀՈԱԿ-ին հատկացնել լրացուցիչ 2 700,0 հազար դրամ և ևս 4 040,0 հազար դրամ ֆինանսավորում՝ առաջացած այլ խնդիրները լուծելու համար:

Մասիս համայնքի բնակիչ, եվրոպայի քառակի չեմպիոն, աշխարհի եռակի բրոնզե մեդալակիր, աշխարհի կրկնակի չեմպիոն, օլիմպիական խաղերի կրկնակի մասնակից Արսեն Հարությունյանը սեպտեմբեր ամսին կայանալիք աշխարհի առաջնությանը մասնակցելու համար դիմել է 4 000,0 հազար դրամ աջակցության խնդրանքով՝ կապված բուժման և ֆիզիկական պատրաստվածության հետ:

Ուսումնական տարվա ավարտով պայմանավորված նախատեսվում է անցկացնել համայնքի ղեկավարի ամենամյա հանդիպում Մասիս համայնքի շրջանավարտների հետ, որի ընթացքում լավագույն աշակերտները կստանան հուշանվեր ժամացույցներ: Անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 1 750,0 հազար դրամ ժամացույցների ձեռք բերման համար:

Հակոբ Պարոնյանի անվան կոմեդիայի թատրոնում ցուցադրվում է «Կուսակալը» պատմական դրաման, որի դիտումը կարող է կարևոր դաստիարակչական ակնարկ հանդիսանալ 16-18 տարեկան պատանիների համար: Համայնքապետարանի նախաձեռնությամբ նախատեսվում է ձեռք բերել թվով 650 տոմս համայնքում գործող դպրոցների աշակերտների համար, որի համար անհրաժեշտ է 2 500,0 հազար դրամ:

Դարակերտ բնակավայրում հասցեների ցուցանակներ ձեռք բերելու համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ կազմակերպվել է գնման ընթացակարգ,որի արդյունքում անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 6 076,0 հազար դրամ:

Սուբվենցիոն ծրագրով համայնքում ոռոգման համակարգերի կառուցման և նորոգման աշխատանքների համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 105 542,0 հազար դրամ:

Բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսված միջոցներն ավելացնել 3 914,8 հազար դրամով՝ առաջացած չնախատեսված լրացուցիչ աշխատանքներն իրականացնելու համար:

Մասիս համայնքի Սիս և Ռանչպար բնակավայրերում նոր տեսախցիկների տեղադրման, ընդհանուր գործող ցանցին միացման համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 1 794,2 հազար դրամ:

Ղուկասավան բնակավայրի նոր հիմնանորոգված կենտրոնական այգում մարզասարքեր տեղադրելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 1 000,0 հազար դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների

Հազար դրամ

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Վարչական մասի Եկամուտներ	Վարչական մասի Ծախսեր	Ֆոնդային մասի եկամուտներ	Ֆոնդային մասի Ծախսեր
				Եկամուտներ					
1				**Այլ եկամուտ** /ընթացիկ դրամաշնորհ/		18 019,509			
2				**Կապիտալ սուբվենցիա**				353967,3	
				Ծախսեր					
3	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239		-34 190,0		
4				Ընթացիկ դրամաշնորհ	4637		19 200,0		
5				Վարչական սարքավորումներ	5122				-112 251,0
6				Այլ սարք սարքավորումներ	5129				1 794,2

7	04	2	4	**Ոռոգում.** Մասիս համայնքում ոռոգման համակարգերի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ	5113				105 542,0
8	04	3	2	**Նավթամթերք և բնական գազ.** Մասիս համայնքում գազաֆիկացման աշխատանքներ	5112				2 108,5
9	04	5	1	**Ճանապարհային տրանսպորտ.** Մասիս համայնքում ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ	5113				327 796,4
10	05	1	1	**Աղբահանում.** Սուբսիդիա «Մասիս համայնքի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ին	4511		3 540,0		
11				Ընթացիկ դրամաշնորհ «Մասիս համայնքի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ին	4637		2 700,0		
12	05	6	1	**Շրջակա միջավայրի պաշտպանություն.** Սուբսիդիա «Մասիս համայնքի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ին	4511		500,0		
13	06	1	1	**Բնակարանային շինարարություն.** բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	5113				27 977,2
14	08	1	1	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Սպորտային նպաստ	4727		4 000,0		
15				Ղուկասավան բն. կենտրոնական այգու համար մարզասարքեր	5129				1 000,0
16	08	2	4	**Այլ մշակութային կազմակերպություններ.** թատրոնի տոմսերի և ժամացույցների ձեռք բերում	4269		4250,0		
17	09	1	1	**Նախադպրոցական կրթություն.** Սուբսիդիա	4511		18 019,509		
				Ընդամենը		***18 019,509***	***18 019,509***	***353 967,3***	***353 967,3***

Բյուջեի փոփոխությունների արդյունքում վարչական և ֆոնդային մասերի եկամուտները և ծախսերը կավելանան 371 986 809 դրամով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ